# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

25.06.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ**

**քննող անձի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2018/61**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.05.2018թ. թիվ 03/26-3/9312-18 գրությամբ «Էրոդավ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00885415) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 22.05.2018թ. թիվ ԴՎԱ/1827 գրության հիման վրա, 24.05.2018թ. «Էրոդավ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.05.2018թ. թիվ ԴՎԱ/1827 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ էլեկտրական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց՝ «Էրոդավ» ՍՊԸ-ն, վերջինս սահմանված կարգով ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում (Հավելված 6), առաջին տեղը զբաղեվրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 6.1), նախկինում կատարած նմանատիպ պայմանագրի և դրա կատարումն հավաստող փաստաթղթեր):

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 6-րդ չափաբաժնի մասով չէր համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված «Ագրեգատներ (էլեկտրական գեներատոր)» ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված էր 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում էր, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր: Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

«Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից, որպես շտկված տարբերակ ներկայացված ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը 6-րդ չափաբաժնի մասով դարձյալ չէր համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց նոր տեխնիկական բնութագիր, ըստ որի առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը

կազմում էր 60 դեցիբել ±10%, այսինքն, մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել մինչև 66 դեցիբել, այնինչ համաձայն հրավերի պահանջի՝ այն չի կարող գերազանցել 60 դեցիբելը, ուստի մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց ընթացակարգի հրավերի պահանջներին ոչ համապատասխան»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**3. «Էրոդավ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Էրոդավ» ՍՊԸ-ն 31.05.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էրոդավ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) և 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 3.2 կետով որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2018թ. ժամը 11:20-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից

առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված է եղել 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ նիստը շարունակել այդ համապատասխանությունը շտկելուց հետո:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ քննարկելով «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է գնահատել հրավերի պահանջներին ոչ բավարար և մերժել հետևյալ հիմնավորմամբ.

«Ի սկզբանե «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված էր 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում էր, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր: Շտկման արդյունքում «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց նոր տեխնիկական բնութագիր, ըստ՝ որի առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը կազմում է 60 դեցիբել ±10%, այսինքն, մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել 66 դեցիբել, այնինչ համաձայն՝ հրավերի պահանջի այն չի կարող գերազանցել 60 դեցիբելը, ուստի մասնակցի առաջարկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին»:

Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 6-րդ չափաբաժնի մասով «Էրոդավ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո, հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում

մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Էրոդավ» ՍՊԸ-ն՝ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով Ընթացակարգի 6-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. Ագրեգատներ (Էլեկտրական գեներատոր) - Սահմանված հզորությունը 4.2-4.7Կվտ, միաֆազ, ելքային լարումը՝ պարապ ընթացքում 230Վ (±10%), բեռնավորման ընթացքում՝ 220Վ, լարման հաճախականությունը 50Հց (±0.2%), շարժիչի պտույտների թիվը՝ 3000 պտույտ/րոպե: Հոսանքի գերբեռնումից պաշտպանվածության առկայություն, գեներատորի փաթույթները պղնձե լարերով, գործարկումը ձեռքով կամ ավտոմատ, անընդհատ աշխատատևողությունը լրիվ լիցքավորված բաքի դեպքում 5.5 ժամ (±10%): Վառելիքի տեսակը բենզին: Կահավորված՝ յուղի մակարդակի ցուցիչով, վոլտմետրով, երկու հատ 16Ա ելքային վարդակներով: Աղմուկի ուժգնությունը 60 դեցիբելից ոչ բարձր: Երաշխիք՝ 2 տարուց ոչ պակաս:

Ընկերությունը՝ Պատվիրատուի կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 6.1 հավելվածով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող N 6 չափաբաժնում նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին և «Աղմուկի ուժգնությունը նշել 68 դեցիբել»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.05.2018թ. ժամը 11:20-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից

առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված է 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր:

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընկերությունը սահմանված ժամկետում կատարել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը քննարկելով «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է գնահատել հրավերի պահանջներին ոչ բավարար՝ այն հիմնավորմամբ, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված էր 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում էր, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր: Շտկման արդյունքում «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց նոր տեխնիկական բնութագիր, ըստ՝ որի առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը կազմում է 60 դեցիբել +-10%, այսինքն, մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել 66 դեցիբել, այնինչ համաձայն՝ հրավերի պահանջի այն չի կարող գերազանցել 60 դեցիբելը, ուստի մասնակցի առաջարկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության 1.3 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է 6-րդ չափաբաժնի մասով մերժել «Էրոդավ» ՍՊԸ-ի հայտը:

Ստացվում է մի իրավիճակ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը, որից հետո հանձնաժողովը՝որոշում է կայացրել մերժել մասնակցի հայտը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իբր շտկման արդյունքում «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը կազմում է 60 դեցիբել +-10%, այսինքն, մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել 66 դեցիբել, այնինչ համաձայն՝ հրավերի պահանջի այն չի կարող գերազանցել 60 դեցիբելը:

Անհասկանալի պատճառներով գնահատող հանձնաժողովը որոշել է, որ 60 դեցիբել (+-10%) դա կարող է լինել միայն 66 դեցիբել, հաշվի չառնելով նաև այն հանգամանքը որ ցանկության դեպքում գնահատող հանձնաժողովը կարող էր ընդունել, որ մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել, օրինակ, 54, 55, 58 դեցիբել, այսինքն հրավերով սահմանված 60 դեցիբելից ոչ բարձր:

Գտնում ենք, որ նման պայմաններում «Էրոդավ» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացում իր ստանձնած պարտավորությունը, քանի որ սահմանված ժամկետում կատարել է պահանջված շտկումը և ներկայացրել է տվյալ ընթացակարգի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք՝ առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը նշելով որպես՝ 60 դեցիբել: Ինչ վերաբերում է փակագծերում նշված (+-10%), ապա պետք է նշել, որ այն կարող էր պրակտիկայում լինել և հենց 60, և 60-ից ցածր և բարձր: Գտնում ենք, որ առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը հնարավոր էր պարզել միայն պայմանագիրը կատարելու փուլում՝ նշված ապրանքը մատակարարելուց հետո փորձարկման արդյունքում, այլ ոչ թե արձանագրել, որ «Էրոդավ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացում իր ստանձնած պարտավորությունը և չի շտկել նշված թերությունը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. **ՍՑ-ԷՍ-2018/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9312-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.05.2018թ. թիվ ԴՎԱ/1827 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 23.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4, 08.05.2018թ. ժամը 11:20-ին կայացած նիստի թիվ 5 և 16.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 31.05.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի կողմից 14.06.2018թ. թիվ 28/18 տրված եզրակացությունը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ էլեկտրական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Էրոդավ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:
- N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ,

հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 23.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 3.1 կետով որոշել է ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Էրոդավ» ՍՊԸ-ին:

- 3.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 02.05.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Էրոդավ» ՍՊԸ-ն ծանուցվել է:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով ընթացակարգի 6-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Ագրեգատներ (Էլեկտրական գեներատոր)- Սահմանված հզորությունը 4.2-4.7Կվտ, միաֆազ, ելքային լարումը՝ պարապ ընթացքում 230Վ (±10%), բեռնավորման ընթացքում՝ 220Վ, լարման հաճախականությունը 50Հց (±0.2%), շարժիչի պտույտների թիվը՝ 3000 պտույտ/րոպե: Հոսանքի գերբեռնումից պաշտպանվածության առկայություն, գեներատորի փաթույթները պղնձե լարերով, գործարկումը ձեռքով կամ ավտոմատ, անընդհատ աշխատատևողությունը լրիվ լիցքավորված բաքի դեպքում 5.5 ժամ (±10%):

Վառելիքի տեսակը բենզին: Կահավորված՝ յուղի մակարդակի ցուցիչով, վոլտմետրով, երկու հատ 16Ա ելքային վարդակներով: Աղմուկի ուժգնությունը 60 դեցիբելից ոչ բարձր: Երաշխիք՝ 2 տարուց ոչ պակաս:

Ընկերությունը N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ հետևյալ բովանդակությամբ.

- 6-րդ չափաբաժին՝ անվանումը՝ Ագրեգատներ (էլեկտրական գեներատոր), ծագման երկիրը՝ ՌԴ, տեխնիկական բնութագիրը՝ Սահմանված հզորությունը 4.5Կվտ, միաֆազ, ելքային լարումը՝ պարապ ընթացքում 230Վ (±10%), բեռնավորման ընթացքում՝ 220Վ, լարման հաճախականությունը 50Հg (±0.2%), շարժիչի պտույտների թիվը՝ 3000 պտույտ/րոպե: Հոսանքի գերբեռնումից պաշտպանվածության առկայություն, գեներատորի փաթույթները պղնձե լարերով, գործարկումը ձեռքով կամ ավտոմատ, անընդհատ աշխատատևողությունը լրիվ լիցքավորված բաքի դեպքում 5.5 ժամ (±10%): Վառելիքի տեսակը բենզին: Կահավորված՝ յուղի մակարդակի ցուցիչով, վոլտմետրով, երկու հատ 16Ա ելքային վարդակներով: Աղմուկի ուժգնությունը 68 դեցիբել: Երաշխիք՝ 2 տարի:

Հանձնաժողովը 08.05.2018թ. ժամը 11:20-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված է 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60դեցիբելից ոչ բարձր:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել մինչև նիստի կասեցման ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը:

Պատվիրատուն 08.05.2018թ. դիմել է «Էրոդավ» ՍՊԸ-ին հայտնելով հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/21 ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված որակավորման

փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավերապես.

- «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանք ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված է 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի Հրավերով պահանջվում է, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2018թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև հասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը, իսկ պահանջվող փաստաթղթերը ուղարկել r.mardoyan@mil.am էլեկտրոնային հասցեին»:

«Էրոդավ» ՍՊԸ-ն 10.05.2018թ. ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը, որտեղ աղմուկի ուժգնությունը նշված է եղել՝ 60 (±10%) դեցիբել:

Հանձնաժողովը 16.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետով «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը գնահատել է Հրավերի պահանջներին ոչ բավարար և մերժել է այն հետևյալ հիմնավորմամբ՝ ի սկզբանե «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված էր 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում էր, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր: Շտկման արդյունքում «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց նոր տեխնիկական բնութագիր, ըստ՝ որի առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը կազմում է 60 դեցիբել ±10%, այսինքն, մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել 66 դեցիբել, այնինչ համաձայն՝ հրավերի պահանջի այն չի կարող գերազանցել 60 դեցիբելը, ուստի մասնակցի առաջարկված

տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում աղմուկի ուժգնությունը նշված է եղել 68 դեցիբել, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ աղմուկի ուժգնությունը պետք է լինի 60 դեցիբելից ոչ բարձր: Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը: «Էրոդավ» ՍՊԸ-ն 10.05.2018թ. ներկայացրել է առաջարկվող ապրանք ամբողջական նկարագրի շտկված տարբերակը, որտեղ աղմուկի ուժգնությունը նշված է եղել 60 (±10%) դեցիբել, այնուամենայնիվ Հանձնաժողովը որոշել է մերժել վերջինիս հայտը հիմնավորելով, որ առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը կազմում է 60 դեցիբել (±10%), այսինքն, մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել 66 դեցիբել: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ըստ գնահատող հանձնաժողովի 60 դեցիբել (±10%) կարող է լինել միայն 66 դեցիբել, հաշվի չառնելով նաև այն, որ մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը վերջինիս հնարավորություն է տալիս մատակարարելու ապրանք, որի աղմուկի ուժգնությունը կարող է կազմել, օրինակ՝ 54, 55 կամ 58 դեցիբել, այսինքն, հրավերով սահմանված 60 դեցիբելից ոչ բարձր: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը հնարավոր էր պարզել միայն պայմանագիրը կատարելու փուլում՝ նշված ապրանքը մատակարարելուց հետո փորձարկման արդյունքում, այլ ոչ թե արձանագրել, որ «Էրոդավ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացում իր ստանձնած պարտավորությունը և չի շտկել նշված թերությունը:

«Էրոդավ» ՍՊԸ-ն 18.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ի կողմից 14.06.2018թ. թիվ 28/18 Ընկերությանը տրամադրած փորձագիտական եզրակացությունը, որում «Ալիք-Էներգո» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Էրոդավ» ՍՊԸ-ի հարցմանն աղմուկի ուժգնության դեցիբելների թույլատրված շեղման հետ կապված հայտնում ենք, որ հասարակական վայրերում, շինություններում աղմուկի ուժգնությունը համաձայն ГОСТ 12.1.003-83 չպետք է ավել լինի քան 85 դեցիբելը, իսկ բնակելի վայրերում 45 դեցիբել /СНИП П-12-77/: Գործարանային աղմուկի ուժգնությունը չափվում է հետևյալ կերպ՝ 10 մետր լայնությամբ, 10մետր երկարությամբ և 4 մետր բարձրությամբ, շինության մեջ փորձարկվում է սարքը (գեներատոր, տրանսֆորմատոր, ագրեգատորներ) և նշվում անձնագրի մեջ համապատասխան դեցիբել (համաձայն ГОСТ Р 52988-2008-08): Իսկ եթե տվյալ սարքը (գեներատոր, տրանսֆորմատոր, ագրեգատորներ) հետագայում տեղակայվի ավելի մեծ վայրում աղմուկի ուժգնությոնը կլինի ավելի փոքր, իսկ եթե վերը նշված չափերից փոքր վայրում՝ աղմուկի ուժգնությունը կլինի ավելի մեծ: Աղմուկի ուժգնությունը չափվում է նաև ОКТАВА - 110А /22-139 դեցիբել/ ձայնային չափի սարքով: Համաձայն «Էրոդավ» ՍՊԸ-ի հարցման, պետք է գեներատորի աղմուկի ուժգնությունը չափվի վերը նշված սարքով, որպեսզի տրամադրվի դեցիբելի մասին տեղեկանք:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք)

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 13-րդ հոդվածի՝ 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

• 13-րդ հոդվածի՝ 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• Հրավերի թիվ 1 Հավելված տեխնիկական բնութագրով 6-րդ չափաբաժնով պահանջվել է՝ Ագրեգատներ (Էլեկտրական գեներատոր)՝ 60 դեցիբելից ոչ բարձր աղմուկի ուժգնությամբ:

• «Էրոդավ» ՍՊԸ-ն N 6.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկվել է՝ Ագրեգատներ (Էլեկտրական գեներատոր)՝ 68 դեցիբել աղմուկի ուժգնությամբ:

• Հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից N 6.1 հավելվածով 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ աղմուկի ուժգնությունը նշված է 68 դեցիբել, մինչդեռ Հրավերով սահմանված է 60 դեցիբելից ոչ բարձր: Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջարկել մինչև նիստի կասեցման ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը:

• «Էրոդավ» ՍՊԸ-ն 10.05.2018թ. Հանձնաժողովին ներկայացրել է շտկված տարբերակը, որտեղ աղմուկի ուժգնությունը նշված է 60 (±10%) դեցիբել:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերի ժամանակ Ընկերության կողմից ներկայացված առարկությունը ուղարկվել է Պատվիրատուին, սակայն Ընկերության կողմից ներկայացված առարկության վերաբերյալ Պատվիրատուն որևէ դիրքորոշում չի ներկայացրելը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված՝ 60 դեցիբել (+-10%) աղմուկի ուժգնությունը կարող է կազմել ոչ միայն 60 դեցիբել, այլ նաև 60 դեցիբելից ցածր և առաջարկվող ապրանքի աղմուկի ուժգնությունը հնարավոր է պարզել պայմանագիրը կատարելու փուլում՝ նշված ապրանքը մատակարարելուց հետո փորձարկման արդյունքում, հետևաբար Ընկերության հայտը տվյալ հիմքով մերժելը իրավաչափ չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էրոդավ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2018թ. թիվ 03/26-3/9312-18 գրությամբ «Էրոդավ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ